

կը հարստահարուի իբրեւ այդ ցեղի մէկ մասը և մասամբ ալ իբր օտարացեղ ու ստրուկ. այս տեսակի հարստահարութիւններն ալ կապուած են նաեւ մասամբ մը ցեղապետական նորսական իրաւունցեալներուն, որ կը գործադրուին իրենց մանրամասնութեանց մէջ՝ ճորտ հայերու և քիւրդերու վրայ: (*)

Իսկ պատճառներէն յետոյ՝ Յեղապետական իրենց միջի կռիւներու արդեւանց մասին ամիսփ եղբակացութեան դալու համար՝ կրնանք համառօտակի ըսել:

Քիւրպ կռուի չըջանները կը ներկայացնեն կատարեալ անխիտանութեան պատկեր մը, թիւրք կառավարութիւնը գործնականապէս չի միջամտեր ցեղային կռիւներուն, շատ շատ խաղաղաբար զեր կ'ստանձնէ միայն հաշտարար համոզումներով: Իսկ այս կռիւներու մէջ մէկ ցեղը յաղթելով ու միւսը պարտուելով, վերջինը տեղի կուտայ, ցեղը կը ցրուի ու կը գաղթէ զանազան տեղերը՝ մինչև կրկին զօրանալը. ոտքի տակ կ'երթան երկու կողմերու հայերը. կը սնանկանան ու կը քայքայուին անտեսապէս և քաղաքացի այն վաճառականներն ու արհեստաւորները, որոնք պարտուած ցեղի հկտ առևտրական կայեր ունէին: Ահա այստեղ է որ ընդհանուր կաշկանդիչ շղթան ամենի վրայ կը վերջացնէ իր դալարումներու հետեանքը, իսկ վրէժը աւելի խոր արմատ կը ձգէ և մշտական կը դառնայ, յաջորդական աւերները շարունակելի ընել տալու համար:

(*) Ճորտական իրաւունքներու և պարտաւորութեանց մասին կարգալ «Յուդ. Լօյտ»-ի 1909 տարւոյ 188, 189, 190, 191 համարներու մէջ (Մուստալի թղթակցութիւն). ինչպէս և շատ մը հարստահարական պատմութիւնները՝ որ հրատարակած են գիրքերն ու լրագիրները. — ինչպէս՝ ճորտ Հայու ծախելը, անոր և տիրոջ մեծ տոնական օրերուն, ծնունդի ումուսնութեան դէպքերուն որոշ յատկացուած նուէրներ տալն. հողի տրդիւնաւորութենէն տուամորդի պէս բաժին հանելը. Տէրերու հիւրնկալութեան համար սովորական բառով ըսելով «բաց դուռ» ունենալն և ուրիշ զանազան անուններով ու քերտով տուրքերը՝ ինչպէս տեղ մը խաւիքութիւն, ուրիշ տեղ լեւալայաւարութիւն, զլուխ ողջի, գլուխ անուի ևայլն: Շատ տեղեր Ազգային սեփականութիւն՝ վանքերն ու եկեղեցիներն ալ նորսական պարտուց և իրաւանց տակն են: Այսչափը կը բաւէ տրդէն: